ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ԴՊՐՈՑ
ԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

Հետազոտական աշխատանք

| | |
|---|---|
| Կազմակերպության տվյալներ<br>• Անվանում, հասցե<br>• Տնօրեն<br>• Էլ.հասցե<br>• Հեռախոս | <<Մասնակցային դպրոց>> կրթական հիմնադրամ<br>Վահրամ Սողոմոնյան<br>masnakcayindproc@gmail.com<br>+37493581908 |
| | |
| Հետազոտության թեմա/վերնագիր<br>• Հետազոտության թեմա | Քերականության դասավանդման արդյունավետ մեթոդները օտար լեզվի ուսուցման գործընթացում միջին դպրոցում |
| | |
| Ուսուցչի տվյալներ<br>• Ա.Ա.Հ.<br>• Մասնագիտություն<br>• Հեռախոս<br>• Էլ. հասցե<br>• Դասավանդվող առարկաներ<br>• Դասարաններ | Անուշ Մուրադյան Հմայակի<br>Ուսուցչուհի<br>091331462<br>anushm627@gmail.com<br>Անգլերեն<br>3-12 դասարաններ |
| Ուսումնական հաստատության տվյալներ<br>• Անվանումը, հասցե<br>• Հեռախոս<br>• էլ. հասցե (տնօրենության)<br>• Web կայքի հասցե | Արարատի մարզ Դիտակի Նվեր Սարգսյանի անվ. միջնակարգ դպրոց<br>077721313<br>ditak1313@mail.ru<br>ditak@schools.am |

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն........................................................................................................3

1. Քերականության դասավանդման արդյունավետ մեթոդների կիրառումը օտար լեզվի ուսուցման գործընթացում միջին դպրոցում..........................................5
2. Քերականության ուսուցումը տեքստերի և նկարների միջոցով........................16

Եզրակացություն.....................................................................................................27

Օգտագործված գրականության ցանկ...................................................................29

# ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Թեմայի արդիականությունը: Օտար լեզուն, որպես ուսումնական առարկա, նպաստում է սովորողների ընդհանուր կրթությանը, զարգացնում նրանց ճանաչողական կարողությունները, խոսքն ու մտածողությունը: Սովորելով օտար լեզու՝ դպրոցականները նախնական պատկերացումներ են ձեռք բերում տվյալ լեզվի մասին, ըմբռնում որոշ առանձնահատկություններ, որոնցով այն տարբերվում է մայրենի լեզվից, ինչը նպաստում է սովորողների ինչպես բանասիրական մտահորիզոնի ընդլայնմանը, այնպես էլ մայրենի լեզուն ավելի լավ հասկանալուն:

Օտար լեզվի տիրապետումը նպաստում է նաև աշխարհագրությունից, պատմությունից, գրականությունից սովորողների կոնկրետ պատկերացումների հարստացմանը:

Օտար լեզուների իմացությունը ընդլայնում է սովորողի աշխարհայացքը, նպաստում են հաղորդակցական և հանրամշակութային կարողությունների ձևավորմանը, լեզվական նորմերի ընկալմանն ու գիտակցմանը՝ բանասիրական իրազեկության ընդլայնման առումով, ինչպես նաև աջակցում են սովորողի ընդհանուր խոսքային կարողությունների զարգացմանը: Հենց սրանում է դրսևորվում լեզվական ուսումնական առարկաների փոխազդեցությունը, ինչը նպաստում է դպրոցականների լեզվաբանական կրթության հիմունքների ձևավորմանը:

Այսօր խիստ կարևորվում է լայն իմաստով ինտեգրումը գիտելիքների ամենատարբեր, ինչպես հումանիտար, այնպես էլ բնագիտական ոլորտների ուսումնական առարկաների միջև, քանի որ լեզուն՝ որպես հաղորդակցության միջոց, ոչ միայն հնարավորություն է ընձեռում ամենատարբեր բնագավառներից տեղեկատվություն և գիտելիքներ ձեռք բերել, այլ նաև նպաստում է սովորողների տրամաբանական, վերլուծական մտածողության զարգացմանը, ծանոթացնում է ճանաչողության համապատասխան մեթոդներին:

Աշխատանքի նպատակը և խնդիրները: Աշխատանքի նպատակն է ուսումնասիրել և ներկայացնել քերականության դասավանդման արդյունավետ մեթոդները օտար լեզվի ուսուցման գործընթացում միջին դպրոցում:

Նշված նպատակն իրագործելու համար աշխատանքի հիմքում դրվել և լուծվել են հետևյալ հիմնական խնդիրները.

- ուսումնասիրել քերականության դասավանդման արդյունավետ մեթոդների կիրառումը օտար լեզվի ուսուցման գործընթացում միջին դպրոցում,
- ներկայացնել քերականության ուսուցումը տեքստերի և նկարների միջոցով:

Աշխատանքի մեթոդական և տեղեկատվական հիմքերը: Աշխատանքում առաջադրված խնդիրների լուծման համար մեթոդական հիմք են ծառայել մի շարք ինտերնետային հոդվածները:

Աշխատանքի կառուցվածքը և ծավալը: Աշխատանքը բաղկացած է ներածությունից, երկու գլխից, եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկից:

Աշխատանքային տեքստը կազմում է 29 տպագրական էջ:

# ԳԼՈՒԽ **1**. ՔԵՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՄԵԹՈԴՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ՕՏԱՐ ԼԵԶՎԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ ՄԻՋԻՆ ԴՊՐՈՑՈՒՄ

Քերականական միջոցների տիրապետումը պետք է հասնի իմտության մակարդակի և խոսքի մեջ արտահայտվի ստեղծագործական կարողության մակարդակով[1]:

Բացատրությունը քերականական իմտությունների և կարողությունների ձևավորման նկատմամբ կողմնորոշում ստեղծելու փուլն է, որի հիմքը՝ մի կողմից բովանդակությունն է, մյուս կողմից՝ նրա արտահայտման միջոցները:

Քերականական միջոցներն ընդգրկում են խոսքի հնչյունային և գրաֆիկական ձևավորում:

Քերականության բացատրման ընթացքում տեղի է ունենում կողմնորոշիչների նախնական բացահայտում և գործողությունների յուրացում[2]:

Կողմնորոշիչների համակարգի մեջ մտնում են օբյեկտի մոդելը և գործողության մոդեր:

[1]Scrivener J., Learning Teaching, Macmillan Books for Teachers, 2007, P. 59.
[2]Scrivener J., Նշված աշխ., էջ 60:

Կողմնորոշիչները հենվում են գիտական տեսության վրա, որն ապահովում է քերականական գործողությունների կատարման ընդհանրացված եղանակների յուրացումը: Քերականական նոր նյութի բացատրությունը սկսվում է կողմնորոշիչների բացահայտման փուլով: Վարժությունների կատարման ընթացքում իրագործվում է հաջորդ փուլը՝ գործողությունների յուրացումը:

Ընդհանրապես դպրոցում, քերականական նոր նյութի ծանոթացումը մեկ դասի սահմաններում ներառում է երեք հաջորդական օղակներ՝ նոր նյութի ցուցադրում, հասկացածի ստուգում, նախնական ամրապնդում: Քերականական երևույթի ցուցադրումը ենթադրում է իմաստի, ձևի և գործածության ծանոթացում: Ակտիվ քերականության բացատրությունը իրականացվում է իմաստից դեպի լեզվական արտահայտման ձևը, իսկ պասիվը՝ ձևից դեպի իմաստը: Բացատրությունը սկսվում է  քերականական կառուցվածքի նշանակության բացահայտումով, որից հետո աշակերտների ուշադրությունը հրավիրելով էական կողմնորոշիչների վրա, ցուցադրվում է նրա կազմությունը:

Նյութի նախնական ամրապնդումն ապահովվում է կառուցվածքի վերարտադրումով: Նոր կառուցվածքների վերարտադրմանն ու ճանաչմանն ուղղված վարժությունների նպատակը քերականական հմտությունների ու կարողությունների ամրապնդումն ու զարգացումն է:

Քերականական նյութին ծանոթանալը քերականական հմտությունների և կարողությունների ստեղծման սկիզբն է համարվում: Բացատրությունից անմիջապես հետո բանավոր վարժությունների կատարումը սովորողներին մղում է գործածելու ներմուծված նոր կառուցվածքները[3]:

Այսպիսով, ստեղծվում և յուրացվում են քերականական ձևերի և կառուցվածքների տեսողական, հնչյունաշարժողական պատկերներ՝ նպատակաուղղված սովորողների քերականական գիտելիքների, ընդհանրապես, նրանց լեզվական, հաղորդակցական կարողությունների զարգացմանը:

Օտար լեզուների դասավանդմանը նվիրված ժամանակակից մեթոդական հետազոտություններում հատուկ տեղ է տրվում հաղորդակցման ընթացքում լեզվական նյութի (բառապաշար, քերականություն, հնչյունաբանություն) ավտոմատացված յուրացմանը, որը ենթադրում է նաև աշակերտների խոսքամտածողական գործունեության զարգացում:

Խոսքային գործունեության ուսուցման հաջողությունն ապահովող հիմնական գործոնի դերում հանդես են գալիս վարժությունները, որոնցով ձևավորվում, զարգացվում և կատարելագործվում են խոսքային հմտություններն ու կարողությունները[4]:

Վարժությունների համակարգը կառուցելիս անհրաժեշտ է մի կողմից հաշվի առնել սովորողների մտավոր, հոգեբանական, խոսքամտածողական առանձնահատկությունները, որոնք գործում են յուրացման ժամանակ, իսկ մյուս կողմից՝ խոսքային կարողությունների ու հմտությունների ձևավորման

---

[3]Scrivener J., Learning Teaching. MACMILLAN, 2007, P. 84.
[4]Sheils J., Communication in the Modern Language Classroom.  Council of Europe, 1993, P. 101.

հաջորդականությունը: Օտար լեզվով խոսքային կարողությունների ու հմտությունների զարգացումը ենթադրում է լեզվական(նախապատրաստական, մարզական) և խոսքային (իրադրական, ստեղծագործական) վարժությունների կատարում: Լեզվական վարժությունները կարող են լինել ասպեկտային (բառական, քերականական, արտասանական) և կոմպլեքսային:

Մեթոդիկայում տարբերակում են վարժությունների հետևյալ տիպերը, որոնց հիմքում ընկած են տարբեր գործոններ.

- ըստ նպատակի՝ ընկալողական– վերարտադրողական (receptive, productive),
- ըստ կարողությունների և հմտությունների ձևավորման հաջորդականության՝ լեզվախոսքային,
- ըստ կատարման ձևի՝ բանավոր—գրավոր, թարգմանչական—ոչ թարգմանչական, ծրագրավորված—ոչ ծրագրավորված, անհատական— խմբային (ֆրոնտալ),
- ըստ կատարման տեղի՝ դասարանային, լաբորատոր, տնային:

Ընկալողական–վերարտադրողական և լեզվախոսքային վարժությունները կապված են միմյանց հետ, նրանց տեսակարար կշիռը կախված է այն բանից, թե՛ տվյալ խոսքային գործունեության որ տեսակը պետք է ձևավորել՝ ընկալողական, թե՛ վերարտադրողական, իսկ տեսակի ընտրությունը կախված է հմտությունների և կարողությունների զարգացման մակարդակից:

Վարժությունները կառուցելիս պետք է նկատի ունենալ խոսքային գործունեության առանձին տեսակների յուրահատկությունները, հենման օղակների աստիճանական վերացումը, նյութի և վարժությունների բովանդակության բարդացումը, ինչպես նաև կոնտեքստի մեջ ուսուցանվող կառուցվածքի մեկուսացված օգտագործումը:

Վերարտադրողական քերականական կարողությունները, որոնք ընկած են խոսելու և գրելու հիմքում, տարբերվում են ընկալողական կարողություններից, որոնք ընկած են ունկնդրելու և ընթերցելու հիմքում: Ներկայացնենք վերարտադրողական վարժությունները[5]:

Ընկալողական քերականական վարժություններ ***(Receptive Grammar Exercises)***։ Ընկալողական քերականական վարժությունների միջոցով տեքստում ձևավորվում են քերականական կառուցվածքներ ճանաչելու և հասկանալու կարողությունները, իսկ վերլուծահամադրական գործողությունների հիման վրա՝ նախադասությունների մասնատումն ըստ իմաստային բաղադրամասերի և դրանց միացումը մեկ ամբողջության մեջ:

Այս խմբի վարժությունների նպատակը քերականական նյութի ավտոմատացված ընկալումն ու տեքստի բովանդակությունը հասկանալն է:

Ընկալողական քերականական կարողությունների զարգացման հիմքում ընկած է քերականական հատկանիշի առանձնացումը:

---

[5]Scrivener J., Նշված աշխ., էջ 74:

Սովորողների ուշադրությունը կենտրոնացվում է երևույթի ճիշտ ընկալումն ապահովող քերականական հատկանիշների վրա՝ ընդ որում հատկանիշների առանձնացումը պետք է ուղեկցվի բացատրություններով:

Ճանաչման հմտությունների ձևավորման համար կատարվում են նախապատրաստական վարժություններ, որոնք սովորեցնում են առանձնացնել ոչ միայն նյութական հատկանիշը, այլև նպաստում են քերականական ձևի կայունացմանը:

Ճանաչման մեխանիզմի ձևավորման համար օգտագործվում են հետևյալ վարժությունները.

1. **Քերականական հատկանիշների ճանաչում** (օրինակ, գտնել ստորոգյալը նախադասության մեջ, անվանել տրված քերականական կառուցվածքի ուղիղ ձևը, որոշել տվյալ բառերի ֆունկցիան, ընտրել գոյականներ, որոնք կարող են կապակցվել տրված ածականների հետ, բացթողումները լրացնել համապատասխան քերականական ձևով, կարդալ և դուրս գրել նշված քերականական հատկանիշներով նախադասություններ)
2. **Քերականական կառուցվածքների տարբերակում** (Կարդալ, լսել զույգ նախադասություններ, որոշել ինչով են նրանք տարբերվում, որոշել բայի ժամանակային ձևը, տեքստից դուրս գրել բայերը և խմբավորել ըստ նշված հատկանիշի)[6]:

Նոր նյութի հաղորդումը մի բան է, սովորողներին ստիպել կիրառել այդ նյութը՝ այլ բան: Օտար լեզվի ուսուցման գլխավոր նպատակներից մեկը՝ սովորողներին սովորեցնել ինչպես կիրառել նոր ստացված գիտելիքը: Ուսուցիչները ավելի մեծ ուշադրություն պետք է դարձնեն ոչ թե նոր նյութի հաղորդմանը, այլ այդ նյութը գործնականում կիրառելուն: Այսինքն՝ ծանոթանալով քերականական նյութի ձևին ու նշանակությանը, սովորողները պետք է կարողանան իրենց սովորածը կիրառեն լեզվական հմտություններում՝ ունկնդրելիս, խոսելիս, կարդալիս և գրելիս: Հետևաբար վարժություններն էլ պետք է ընտրվեն ուսուցման նպատակին համապատասխան:

Հաղորդակցական մոտեցման դեպքում ձևն ու իմաստը ներկայացվում և կիրառվում են կոնկրետ համատեքստում և իրավիճակում, որպեսզի սովորողները տեսնեն, թե ինչպես է դա կիրառվում:

Օրինակ 1: Simon's adventure Քերականական նյութը: Անցյալ ժամանակաձևեր

Այս վարժության նպատակն է սովորողներին մղել կրկնելու բայի տարբեր անցյալ ժամանակաձևերը մինչ դրանք կիրառելը: Սովորողներին հանձնարարվում է ընթերցել Սայմոնի մասին պատմությունը: Կարդալուց հետո նրանք պետք է ընդգծեն պատմության մեջ եղած բոլոր անցյալ ժամանակաձևերը և այնուհետև դրանք բաժանել երեք տարբեր մասերի (օրինակ՝ անցյալ- was, went down looked, took, անցյալ շարունակական-was rising, were breaking, were running, were just coming back,

[6]Thornbury S. How to Teach Grammar, PEARSON,Longman, 2010, P. 54.

վաղակատար անցյալ - had woken up, hadn't been able, had left, had looked for, had become).

One day when he was on holiday with a group of friends, Simon went down to the beach at six thirty because he had woken up very early and he hadn't been able to get back to sleep.

It was a beautiful morning. The sun was rising in the sky and the waves were breaking on the shore. A few joggers were running up and down the beach and some fishermen were just coming back from a night's fishing. It looked absolutely beautiful.

Simon took a surfboard and paddled out into the bay and then he just lay on his surfboard for a bit thinking about life. He fell asleep. When he woke up and looked around, he got quite a shock because he had drifted a long way from the beach and he couldn't get back.

He decided to use his mobile phone to get help and then he realised that he had left it back in his room. And that was when he started to feel quite frightened. They found him in the afternoon. His friends had looked for him all morning and at about lunchtime they had become very anxious. They called the air sea rescue service and a helicopter pilot saw him about two hours later.

Սովորողները ինքնուրույն ստուգում են արդյոք ճիշտ են կատարել հանձնարարաությունը մինչ ուսուցչի հետ ճիշտ պատասխանները ստուգելը: Այնուհետև նրանք փակում են գրքերը և միմյանց պատմում Սայմոնի պատմությունը: Եվ այսպես, բոլորը հերթականությամբ պատմում են պատմությունը և, արդյունքում, տեքստը պատմելը նրանց մոտ ավելի ու ավելի սահուն է ստացվում: Այս տիպի կրկնությունը չափազանց օգտակար է:

Վերջում ուսուցիչը հարցնում է սովորողներին արդյոք նրանք գիտեն պատմություն ուրախ վերջաբանով: Նրանք կարող են այս մասին խոսել փոքր խմբերով և վերջում ամբողջ դասարանով որոշել, թե որն էր ամենահետաքրքիր պատմությունը:

Օրինակ 2: Matching sentence halves    Քերականական նյութը: third conditional adult

Գտնել նախադասության երկրորդ մասը– այս հանձնարարությունը լավագույն միջոցներից մեկն է, որը ստիպում է սովորողներին մտածել նախադասության կազմության և իմաստի մասին: Սա կարելի է անել նրանց առաջադրելով երկու շարք, որտեղից պետք է ընտրեն: Այս վարժությունը կարելի է կատարել և'զույգերով, և' անհատապես:

Այս վարժությունը առավել հետաքրքրական, հաճելի և փոխներգործուն է դառնում, եթե նախադասության

| | |
|---|---|
| A. If Andrew hadn't got stuck in a traffic jam | i.he would have been able to answer her call. |
| b. If Beatrice had written down the name of his company | ii. they wouldn't have been late. |
| c. If Jed hadn't lost his mobile phone | iii. he wouldn't have missed his flight. |
| d. If Mrs. Wickstead hadn't overslept | iv. she would have been able to call him at work. |
| e. If Peter and Clare hadn't missed the bus | v. she wouldn't have agreed to marry him. |
| f. If Ruth hadn't been feeling extremely happy | vi. she wouldn't have been there when the postman came. |

մասերը գրում ենք քարտերի վրա։ Յուրաքանչյուր սովորող վերցնում է մի քարտ և դասասենյակով անցնում է այնքան, մինչև չգտնի «զույգին»։ Նրանք սա կատարում են առանց իրենց քարտերը մյուսներին ցուցադրելու։ Այնուհետև բարձրաձայն կարդում են նախադասությունները և քննարկում, թե որ զույգերն են հնարավոր, որոնք՝ ոչ։

Հաջորդիվ ներկայացնում ենք ընկալողական տարբեր վարժություններ.

Վարժություն **1.**

Բացատրել հետևյալ բառախմբերում առկա տարբերությունները (Explain the differences in the following word groups)

--you're and your

--it's and its

--boy's and boys'

Վարժություն **2.**

**The London Dungeon**

Լրացնել ճիշտ ժամանակաձևը (Fill the gaps with the correct tenses).

1. The London Dungeon <u>(lie)</u> in the oldest part of London - in an old subterranean prison (that's what the word Dungeon <u>(stand)</u> for.
2. The museum <u>(take)</u> its visitors on a journey through England's bloody history.
3. It <u>(demonstrate)</u> the brutal killings and tortures of the past.

4. You (experience / can) for example how people (die) on the Gallow or during the Plague of 1665.

5. The Dungeon also (show) scenes of Jack the Ripper or the beheading of Anne Boleyn, who (be) one of Henry VIII’s six wives.

Վարժություն **3.**

Ընտրել ճիշտ պատասխանը **(Choose the correct answer)**

1. Could I (Say /tell/ talk) to you for a minute?
2. He (works/ is working/ has worked/ has been working) here for five years now.
3. Rome (did not built/ had not built/ was not built/ was not building) in a day.
4. Who is the woman (in/ on /at) the picture?
5. How (much/ many) sugar do you take in your tea?
6. Before he went to England he (reads/ read/ has read/had read) tons of guide books.

Վարժություն **4 .**

Թարգմանել տեքստը **(Translate the text into English)**

Ինչ է սերը

Իսկ ի՞նչ է սերը:

Սերն այն է, երբ մարդուն սիրում ես անկախ ամեն ինչից, ամեն րոպե նա մտքիդ է, իսկ երբ լսում ես ձայնը, թվում է, թե աշխարհը քոնն է: Երբ մարդուն անսահման կարոտում ես և ուզում ես, որ նա երջանիկ լինի: Երբ վախենում ես մտածել երջանկության մասին, որովհետև երբեմն հավատդ չի գալիս, որ քեզ բաժին է հասել այսչափ երջանկություն: Սերն այն է, երբ հավատում ես նրան, առանց որևէ կասկածի ու հարցերի, երբ վստահում ես ու պատրաստ ես աշխարհի ծայրը հասնել նրա հետ, նրա համար: Երբ պատրաստ ես անգամ կյանքդ զոհաբերել հանուն այդ մարդու և փոխարենը ոչինչ–ոչինչ չակնկալել: Սերն այն է, երբ պատկերացնում ես, թե ինչպես եք միասին մեծանալու, պատկերացնում ես ձեզ հինգ, տաս, քսան, քառասուն տարի հետո, պատկերացնում ես ձեր երեխաներին, պատկերացում ես, թե ինչպես եք միասին ծերանալու ու երազում, որ մահանաք նույն օրը, որպեսզի միմյանց ցավ չպատճառեք: Սերն այն է, երբ հավատում ես, որ սերդ այնքան մեծ է, որ դուք իրոք նույն օրը կմահանաք. այլ կերպ լինել չի կարող: Սերն այն է, որ քեզ ցույց է տալիս, թե հանուն ինչի արժե ապրել: Ես սիրում եմ քեզ այսօր, սիրել եմ երեկ ու կսիրեմ վաղը, մի ամիս հետո, մի տարի ու անգամ մի կյանք հետո:

Վերարտադրողական վարժություններ ***(Productive Exercises)***։ Համաձայն ժամանակակից հետազոտությունների լեզվի ուսուցման պրոցեսում խոսքային կարողությունների քերականական կողմի հիմնական նախադրյալներն են.

- Ծանոթ լեզվական նյութի հիման վրա խոսքի քերականական մեխանիզմների ձևավորում:
- Հնարավորին չափ քիչ ժամանակի վատնումով գործողությունների կատարման աստիճանական զարգացում ու ավտոմատացում:
- Աստիճանաբար զարգացող կառուցվածքներում քերականական մեխանիզմի ձևավորում:

Ելնելով այս նախադրյալներից նպատակահարմար է առանձնացնել վարժությունների երեք տիպ:

- Ընդօրինակում.

Սովորողներն ըստ նմուշի քերականական նոր նյութը վերարտադրում են նախադասություններում և կառուցվածքներում: Սա նպատակահարմար է, քանի որ ցանկացած գործողության կատարումը ենթադրում է նմուշի առկայություն, իսկ նմուշին հետևելը իրականանում է գիտակցական ընդօրինակման ճանապարհով:

Օրինակ **1.** Say as many sentences as possible. (Կազմել հնարավորինս շատ նախադասություններ).

Tom has already played.

We have prepared the table.

Օրինակ **2.** Make up sentences as shown in the example. (Հետևելով օրինակին՝ կազմել նախադասություններ)

I'm going to repair my boat this afternoon.

I'm going to do my homework (watch a film, visit my cousin.)

Օրինակ **3.** Տարունակել նախադասությունը (Complete the following sentences)

Օրինակ **4.** Կազմել ճիշտ նախադասություններ (Make up true sentences)

- Քերականական կառուցվածքի ձևափոխում

Կատարվում են տարբեր տիպի ձևափոխական վարժություններ, որոնք նպաստում են խոսքի քերականական ստերեոտիպերի ձևավորմանը:

Օրինակ՝ Երկու նախադասությունը միավորել մեկ նախադասության մեջ (Change two sentences into one)

Close the window, please. But I have already closed it.

- Քերականական կառուցվածքների փոխկապակցում

Ըստ դժվարության աստիճանի՝ այս վարժությունները բաժանվում են երկու ենթախմբի.

1. համձնարարված լեզվական նյութով և տրված բովանդակությամբ վարժություններ,
2. առանց լեզվական նյութի և առանց տրված բովանդակության վարժություններ։

- Մեկ բառի պատմություն **(One word story)**

Այս վարժությունը չափազանց պարզ է: Խմբի յուրաքանչյուր սովորող մեկ բառ է ավելացնում և ստեղծվում է պատմություն: Սովորողները շրջան են կազմում, եթե դա հնարավոր է: Ուսուցիչը կարող է սկսել վարժությունը` ասելով առաջին բառը և աշակերտները հաջորդաբար ավելացնում են մեկական բառ` առանց նախորդներին կրկնելու: Պատմությունները կարող են տարբեր կերպ զարգանալ: Որոշ խմբեր կարող են ուսուցչին խնդրել կետադրությունը դնել և դրանով ազդարարել մի նախադասության ավարտն ու մյուսի սկիզբը: Այս վարժության կարևորությունը կայանում է նրանում, որ սովորողները պետք է կենտրոնանան և ուշադիր լսեն մյուսներին` պատմությունը համապատասխանաբար շարունակելու նպատակով: Այն օգնում է վեր հանել այն խնդիրները, որ սովորողներն ունեն կապված ժամանակաձևերի կամ նախդիրների հետ և հնարավորություն է տալիս ուսուցչին դրանք հետագայում շտկելու:

- Գրել շարադրություն հետևյալ թեմայով` օգտագործելով մոդալ բայեր (Write composition on the following topic by using model verbs).
- Ընտրել մի արտահայտություն և գրել մի փաստարկ: Եթե օգտագործեք ձեր կամ մեկ ուրիշի կյանքի փորձը, ավելի լավ: Այստեղ կան մի քանի արտահայտություններ, որ կարող եք ընտրել:

  - What goes around comes around
  - Money is the root of all evil
  - Laughter is the best medicine
  - There's no such thing as a free lunch
  - All good things come to those who wait
  - Revenge is a dish best served cold

- Ավարտել պատմությունը **(Finish the Story)**
- Քննարկել թեմաներից մեկը **(Time for discussion)**

1. Have you already decided what you are going to do in the future?
2. Are you going to work after leaving school or do you want to continue your education?
3. What are your ambitions?

Այսքանով չեն սահմանափակվում վերարտադրողական քերականական վարժությունները:

Այսպիսով, վերարտադրողական քերականական վարժությունները կոչված են զարգացնելու սովորողների ակտիվ հաղորդակցական, այն է խոսելու և գրելու կարողությունները` քերականության կարողություններին զուգահեռ:

Ընկալողական և վերարտադրողական քերականական վարժությունները փոխկապակցված են և փոխլրացնող: Բաժանումն ու տարբերակումը կատարվում է միայն մեթոդական նկատառումներով: Ուստի, կարծում ենք, որ դպրոցում դրանց կիրառումը հավասարապես կարևորվում է:

## ԳԼՈՒԽ **2**. ՔԵՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ ՏԵՔՍՏԵՐԻ ԵՎ ՆԿԱՐՆԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ

Որպեսզի սովորողները հասնեն երկրորդ օտար լեզվի լիարժեք տիրապետմանը, նրանք պետք է կարողանան հասկանալ և վերարտադրել ոչ միայն մեկուսացված նախադասությունները այլև այդ լեզվով ամբողջ տեքստերը[7]:

Տեքստի լեզվաբանության պատմության ընթացքում տեքստի սահմանման և սահմանների որոշման կողքին կարևորություն է ստացել նաև տեքստը բաղադրող միավորներն ուսումնասիրելը:

Տեքստակազմիչ տարրերի առանձնացումը կատարվում է գլխավորապես իմաստաբանական և կառուցվածքաբանական հայեցակետերով: Տեքստը՝ որպես մտքի որոշակի ընթացք արտահայտող հյուսվածք, վերոնշյալ երկու առումներով էլ բարդությունների առաջ է կանգնեցնում լեզվաբանին. մի կողմից՝ պարզ է, որ ցանկացած տեքստ, սկսած բանավոր երկխոսությունից մինչև գրական մեծ և փոքր ստեղծագործություններ, միշտ ինչ-որ միավորներից է ամբողջանում, մյուս կողմից՝ ցանկացած տեքստ ըստ էության մեկ ամբողջական բովանդակություն կրող է, թեև բաղկացած է համեմատաբար փոքր իմաստակիր միավորներից, և այդ բովանդակային ամբողջը մասնատելը լավագույն դեպքում պարադոքսային է թվում:

ՏԵՔՍՏԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ

**1.** Տեքստեր՝ ունկնդրելու և խոսելու համար

- կարճ նկարագրություն
- կարճ տեղեկատվական տեքստ, հայտարարություններ (հաղորդագրություն)
- կարճ պատմվածք (պատմություն)
- երգեր, բանաստեղծություններ
- երկխոսություն-հարցում
- երկխոսություն-մտքերի փոխանակում
- հարցազրույց
- պարզեցված (ադապտացված) հատված գեղարվեստական երկերից, հեքիաթներից
- ձայնագրություն և տեսաֆիլմ:

Զարգացնել ունկնդրելու և խոսելու հետևյալ կարողությունները.

- Հասկանալ բանավոր կարճ նկարագրության, հաղորդման, պատմության ընդհանուր միտքը և տեղեկատվություն տալ այդ մասին:
- Հասկանալ և պատասխանել, երբ հարցնում են իր և իր հետաքրքրությունների մասին:
- Հասկանալ գործողությունների հրահանգներ և նման հրահանգներ տալ:

[7]Common European Framework of Reference for Languages: Learning, Teaching, Assessment, Modern Languages Division, Council of Europe, Strasbourg, Cambridge University Press, 2001, P. 113.

- Հասկանալ ծանոթ թեմայով մուլտֆիլմի, տեսաֆիլմի գլխավոր իմաստը, կարճ տեղեկություն տալ այդ մասին՝ արտահայտելով նաև սեփական կարծիքը:
- Հասկանալ առօրյա իրադարձությունների մասին հեռուստատեսային կամ ռադիոհաղորդումների, կարճ ձայնագրությունների հիմնական բովանդակությունը:
- Լսել և տարբերակել հիմնական տեղեկատվությունը երկրորդականից:
- Ներկայացնել ինքն իրեն, ընտանիքի անդամներին և ընկերներին, պատմել իր զբաղմունքի, հետաքրքրությունների մասին:
- Նկարագրել վայրեր, քաղաքներ, իրադարձություններ:
- Բնութագրել մարդկանց, վայրերը՝ արտահայտելով իր վերաբերմունքը:
- Հաղորդել տեղի ունեցած դեպքի, պատահարի, իրադարձության մասին:
- Պատմել անցյալ և ապագա իրադարձությունների մասին (արձակուրդի, հանգստյան օրվա, արկածի, ապագա պլանների և այլն):
- Պատմել նշանավոր մարդկանց, ապագա մասնագիտության, կարդացած գրքի և այլնի մասին՝ արտահայտելով սեփական տեսակետը:
- Զրույց վարել առօրյա թեմաների շուրջ՝ օգտագործելով լեզվակիր ժողովրդին բնորոշ էթիկետային քաղաքավարի կաղապարները
- Կարողանալ ընդունել հրավերը, առաջարկությունը, օգնությունը կամ քաղաքավարի մերժել դրանք՝ բացատրելով ու հիմնավորելով հրավերքն, առաջարկությունը, օգնությունը ընդունելու կամ չընդունելու պատճառները:
- Երկխոսություն-հարցում վարել՝ որոշակի տեղեկատվություն ստանալու նպատակով
- Մասնակցել երկխոսություն-մտքերի փոխանակմանը՝ արտահայտելով սեփական կարծիքը և հիմնավորելով այն:
- Հեռախոսային պարզ զրույց վարել (ասել ով է զանգում, խնդրել որևէ մեկի հեռախոսի համարը:
- Ինչ-որ բան հաղորդել և այլն):
- Հանպատրաստից զրույց վարել դպրոցի, առօրյայի, սիրած զբաղմունքի, էքսկուրսիաների և այլ՝ անցյալ, ներկա կամ ապագա իրադարձությունների մասին:
- Վերարտադրել ուրիշի խոսքը:
- Խոսել նախասիրությունների մասին, արտահայտել զգացմունքները/ էմոցիաները (հույս, ուրախություն, տխրություն, ցանկություն:
- դժգոհություն, բավարարվածություն, տարակուսանք):
- Պարզորեն նկարագրել հայրենի և լեզվակիր ժողովրդի որոշ տոներ և դրանց հետ կապված սովորույթները և ավանդույթները:

– Կռահել անհրաժեշտ տեղեկատվությունը ընդհանուր համատեքստից[8]:

Ստորև ներկայացված տեքստը թույլ կտա ավելի ընկալելի դարձնել ապառնի ժամանակը, հատկապես՝ տարբերակել ***will*** և ***be going to*** բայաձևերի կիրառման առանձնահատկությունները:



What will the future be like?

We asked you for your ideas.

Meili

I'm going to be an architect. I'm interested in making buildings more green. In the future we won't need electricity power stations. Each house will produce enough energy from the sun for heating and lights.

I think we'll spend too much time in virtual worlds. Even when we travel – the car will drive itself and we will sit inside and play computer games. We'll probably even forget to look out of the window. Maybe the computer will send you a message saying 'It's sunny today, did you know?' or 'Look out! You're going to crash!'

Seb

Boris

Your fridge will be 'intelligent'. When you don't have any food, the supermarket will automatically send you your favourite things.

**Complete the predictions using the verbs in brackets and either *will certainly, will probably, will possibly, probably won't* or *definitely won`t***

50 years from now...
1 There …………a city on Mars, (be) school?
2 People …………………………………………………………………………………………… 4 The film finishes quite late. My dad's
through the air aqd not on roads, (travel) going pick me up afterwards.
3 There a vaccine for colds, (be) 5 Don't be scared of the dog.lt not bite
4 We ……………………………………………… all our classes at home, (have) you.
5 Robots ……………………………… think like a human, (be able to) 6 I've bought some paint. I going to paint
6 There ……………………………… a lot of oil in the world, (be) my room.
7 We coins any more, (have) 7 What do you think he do now?
8 We …………………………………………………………live forever, (be able to)

[8]Tornbury S., How to Teach Grammar, PEARSON, Longman, 2010, P. 27.

**Complete the sentences by putting the verbs in brackets in the correct places. One verb should be in the present simple and one should be with *will /won't.***

1 I ...............*1* a cup of coffee as soon
as I.......................................... home, (get, have)
2 I.................................... untill.....................................
everything is all right, (not leave, know)
3 She ................................angry when she
......................................................................(be, find out)
4 You .............................an accident unless you
more careful, (be, have)
5 After I..............................................................my mum
back, I ........................................................any money
left, (pay, not have)
6 It easy to find work before
the summer ......................................(start, not be)
7 When he..................................................................., he
................................ a famous writer, (be, grow up)
8 If they as a team, they
.............................................................. (work, do well)

**Answer the questions with your partner using past modals.**

Roald Dahl, who died in 1990, is still one of the world's best-selling authors. His short stories **for** adults are **known for** their unexpected endings. Alfred Hitchcock's movie *Man from the South* was **based on** a **story by** Dahl. But Roald Dahl is probably most **famous for** the dark humour in his very popular children's stories, **such as** *Charlie and the Chocolate Factory, Fantastic Mr Fox* and *James and the Giant Peach.*
Roald was very organised.

He always worked for two hours: from 10 until 12 in the morning and from 4 to 6 in the afternoon. He always wrote **in pencil** and when he started writing for the day, he **insisted on** having six sharp pencils in a jar **by his side.**

In 1925, when Roald was 9, he went away to boarding school. He was very homesick and quite often **in trouble.** The world now knows that Roald was very **clever at** making up stories. But **instead of** seeing a future author, English teachers at his school were very **disappointed with** his work.Throughout his school life, teachers complained that he was **terrible at** spelling and that he could ot get his thoughts on paper.

**Prepositions**

**Adjective + preposition**

**1 We use prepositions after some adjectives.**

*I'm **afraid of** spiders.*

**Other examples:**

***about** happy / sad / sorry **about**, right / wrong **about**, sure **about**, worried **about** **as** known **as***

***at** good / bad **at**, clever **at**, surprised **at**, shocked **at***

***for** famous / known **for**, ready **for**, responsible **for**, sorry **for***

***from** different **from*** (US *different than*), *made **from***

***in** interested **in***

***of** aware **of**, full **of**, made **of**, proud **of**, tired **of**, typical **of***

***on** keen **on**, based **on***

***to** kind **to**, married **to**, similar **to**, nice **to***

***with** angry **with*** (someone) / *about* (something),

*bored **with**, crowded **with**, disappointed **with**, pleased **with**, wrong **with***

Վերը նշված տեքստը թույլ է տալիս սովորել Նախդիրները և ճիշտ կիրառել ։

Մի շարք արտահայտություններ և բառակապակցություններ կազմված են նախդիրներից ։

օրինակ ՝

| | |
|---|---|
| by accident | on holiday |
| above / below average | in my opinion |
| on average | on my own |

| | |
|---|---|
| in cash / by credit card | on page... |
| | |
| by chance | on the phone |
| in danger | on purpose |
| out of date | on the radio |
| in fact | by your side |
| on fire | in time |
| in a hurry | on time |
| in love | in trouble |
| in the newspaper | on TV |
| by mistake | on the way |
| by myself | |

Հետևյալ առաջադրանքում պետք է ընդգծել նախադասության ը համապատասխան նախդիրը.

1 The students never arrive *on/in* time – they are always five or ten minutes late.

2 He's always very kind *with /to* me.

3 The baby couldn't use a spoon *to/for* eating.

4 I had a phone call *of/from* Caroline.

5 I am writing *thanks to/concerning* your article in the paper.

6 Why did you go out *without/despite* telling me?

7 I got to the airport just *in/on* time to see my parents before they left.

8 Dr Lauder is not here this week. She's *in/on* holiday.

9 They have already started preparing *to/for*the wedding.

10 She does not eat meat. It's *against/about* her beliefs

Սովորողները պետք է ընդգծեն ճիշտ տարբերակը:

1 ......... my opinion, Roald Dahl was one of the world's best writers.

A.On B. From C.In

2 Why don't you go to bed instead of on the sofa?

A. lie B .to lie C. lying

3 *James and the Giant Peach* is a story ....... a boy who makes friends with some insects.

A .by B. about C. of

| |
|---|
| 4 Their new car is very similar................their old one - it's even the same colour!<br>A. of B. as C. to<br>5 She is very good...... swimming.<br>A. at B. for C. In |

Տալ տրված բառերի բացատրությունները անգլերեն լեզվով **(Give the explanation of the given words in English)**.

1. In spite of
2. Escape
3. Immigrant
4. Huge
5. Independence
6. Gradually

Փոխարինել բառերը հետևյալ բառերով՝ պահպանել, շնորհիվ, ճանաչել, զարգանալ, ազդեցություն, պայծառ **(Replace the words with the following words: preserve, due to, recognize, develop, influence, bright)**

1. The painter has won the award *because of* his talent.
2. When Aram entered the hall, Ann *remembered* at once that she had seen him at the ball.
3. When he came, I looked at him with a *shining* smile.
4. She *kept* the soup in a cool place not to spoil.
5. Her speech *became better* after practice.
6. He is a *bad example* for my child.

Գտնել տարբերությունը **(Find the difference)**

Այս վարժության դեպքում աշակերտները կարող են աշխատել զույգերով: Յուրաքանչյուր զույգին տրվում է երկու տարբեր նկար, օրինակ, ֆուտբոլ խաղացող տղայի և թենիս խաղացող աղջկա: Զույգերը պետք է քննարկեն և գտնեն նմանությունները կամ/և տարբերությունները այդ երկու նկարների:

**Find the differences between these pictures and speak about them.** (Գտեք նկարների միջև եղած տարբերությունները և մեկնաբանեք)



Նկարների նկարագրում **(Picture Describing)**

Խոսքը զարգացնելու մեկ այլ տարբերակ նկարների միջոցով: Այս անգամ տրվում է մեկ նկար և աշակերտները պետք է փորձեն նկարագրել նկարում պատկերվածը: Այս վարժության համար աշակերտներին կարելի է բաժանել խմբերի և յուրաքանչյուր խմբի տալ մեկական տարբեր նկար: Աշակերտները քննարկում են նկարները իրենց խմբերի անդամների հետ, հետո խմբի անդամներից մեկը ներկայացնում է իրենց աշխատանքը ամբողջ դասարանի դիմաց: Այս վարժությունը նպաստում է, որ երեխաները լինեն ավելի ստեղծագործ ինչպես նաև նպաստում է իրենց խոսքային հմտություններին:

Մեկնաբանեք հետևյալ նկարները **(Speak about the following pictures)**

 

Հետևել հրահանգներին **(Following instructions)**

Այս վարժությունների նպատակն է քարտեզի վրա նշել ուղղությունները, մանրամասն լրացնել քարտեզի կամ նկարի ուրվագծերը, փոփոխել նկարն ըստ հրահանգների (օր.՝ ինչ-որ մեկի դեմքին բեղ նկարել կամ ներկել առարկաներից մեկը, նշել ցանկացած տարբերություն բանավոր նկարագրության և մարդու, վայրի կամ առարկայի նկարի միջև, պիտակավորել նկարի մարդուն կամ առարկան)

**Listen to the recording and paint the picture according to the given instructions.** (Լսեք ձայնագրությունը և ներկեք նկարը տրված ցուցումներով)



Համապատասխանեցում **(Matching)**

Այս տեսակի վարժությունների նպատակն է երկխոսությունների, կարճ պատմությունների, նկարները նկարագրության կամ սիմվոլի հետ համապատասխանեցում, խառը նկարների դասավորում ըստ իրադարձությունների հերթականության: Հնարավոր են նաև նկարների առկայություն, որոնք կապ չունեն պատմության հետ:

Աշակերտները ընտրում են նկարները, որոնք ըստ նրանց կապված են պատմության հետ և բացատրում են իրենց ընտրությունը: Ավելորդ նկարները օգնում են աշակերտներին պատմության մեջ տարբեր տարրեր գտնել: Բանավոր և գրավոր տեքստերի համապատասխանեցման օրինակներ են հեռուստատեսությամբ և ռադիոյով հեռարձակվող նորությունների համապատասխանեցումը թերթերի հոդվածների հետ կամ նախադասությունները խոսողների անունների հետ:

**Listen to the recording and choose the picture which is connected to the text.** (Լսեք ձայնագրությունը և ընտրեք տեքստին համապատասխանող նկարը)







Կարդալ ու քննարկել տեքստը և ասել, թե ովքեր են նկարիչները **(Read and discuss the texts and say who the painter are)**

  

**A Step into The World of The Sun**

He was the most famous of the Kilikian masters of miniature. Very little is known about this genius of miniature who was not only a miniature painter, but also a talented poet, historian and a scribe. Six of his manuscripts have been preserved, but only one of them is in Armenia at present. Bright colours and excellent dynamic drawing make his works real masterpieces of miniature.

Looking at his works you can easily see what inspires his art: ancient churches and miniatures, bright colours of old carpets, the stony landscape, pyramid roofs of native dwellings, and his people, men of few words, honest and hard-working. Developing the traditions of ancient Armenian miniature-painters, he expressed himself and his time in new forms.

Many travelers who came to Armenia used to say, some with surprise, some with admiration: "We thought his colours were not natural, but his Armenia is real-the orange sun, the bright ringing colours and dark-blue shadows really exist." His famous still lifes, landscapes and portraits- everything he painted is inspired by his talent and his great feeling for Armenia.

**Keys: 1. Toros Roslin, 2. Minas Avetisyan, 3. Martiros Sarian.**

Պատասխանել հարցերին **(Answer the questions)**

1. Which of the two arts do you prefer: painting or sculpture?
2. Do you know any famous sculptor?

3. Which are the main genres in painting?
   Which do you prefer?

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ուսումնասիրությունների և վերլուծությունների արդյունքում հանգել ենք հետևյալ եզրահանգումներին.

- Ամփոփելով հարկ ենք համարում նշել, որ ընդհանրապես դպրոցում, քերականական նոր նյութի ծանոթացումը մեկ դասի սահմաններում ներառում է երեք հաջորդական օղակներ՝ նոր նյութի ցուցադրում, հասկացածի ստուգում, նախնական ամրապնդում։ Քերականական երևույթի ցուցադրումը ենթադրում է իմաստի, ձևի և գործածության ծանոթացում։ Ակտիվ քերականության բացատրությունը իրականացվում է իմաստից դեպի լեզվական արտահայտման ձևը, իսկ պասիվը՝ ձևից դեպի իմաստը։ Բացատրությունը սկսվում է քերականական կառուցվածքի նշանակության բացահայտումով, որից հետո աշակերտների ուշադրությունը հրավիրելով էական կողմնորոշիչների վրա, ցուցադրվում է նրա կազմությունը։
- Նյութի նախնական ամրապնդումն ապահովվում է կառուցվածքի վերարտադրումով։ Նոր կառուցվածքների վերարտադրմանն ու ճանաչմանն ուղղված վարժությունների նպատակը քերականական հմտությունների ու կարողությունների ամրապնդումն ու զարգացումն է։
- Քերականական նյութին ծանոթանալը քերականական հմտությունների և կարողությունների ստեղծման սկիզբն է համարվում։ Բացատրությունից անմիջապես հետո բանավոր վարժությունների կատարումը սովորողներին մղում է գործածելու ներմուծված նոր կառուցվածքները։
- Այսպիսով, ստեղծվում և յուրացվում են քերականական ձևերի և կառուցվածքների տեսողական, հնչյունաշարժողական պատկերներ՝ նպատակաուղղված սովորողների քերականական

գիտելիքների, ընդհանրապես, նրանց լեզվական, հաղորդակցական կարողությունների զարգացմանը:

- Օտար լեզուների դասավանդմանը նվիրված ժամանակակից մեթոդական հետազոտություններում հատուկ տեղ է տրվում հաղորդակցման ընթացքում լեզվական նյութի (բառապաշար, քերականություն, հնչյունաբանություն) ավտոմատացված յուրացմանը, որը ենթադրում է նաև աշակերտների խոսքամտածողական գործունեության զարգացում:
- Խոսքային գործունեության ուսուցման հաջողությունն ապահովող հիմնական գործոնի դերում հանդես են գալիս վարժությունները, որոնցով ձևավորվում, զարգացվում և կատարելագործվում են խոսքային հմտություններն ու կարողությունները։

## ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ


1. Common European Framework of Reference for Languages: Learning, Teaching, Assessment, Modern Languages Division, Council of Europe, Strasbourg, Cambridge University Press, 2001.
2. Scrivener J., Learning Teaching, Macmillan Books for Teachers, 2007.
3. Scrivener J., Learning Teaching. MACMILLAN, 2007.
4. Sheils J., Communication in the Modern Language Classroom. Council of Europe, 1993.
5. Thornbury S. How to Teach Grammar, PEARSON,Longman, 2010.